Արձանագրություն N 3

«ԷԱՃԱՊՁԲ-2019/16-10-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «22» «հունվարի» 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դանիելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է.Միրոյան, Կ.Մկրտչյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մ.Ղարիբյան

1. **«ԷԱՃԱՊՁԲ-2019/16-10-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին**

1. Մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

ա) «Բեսթ Սմարթ Մեդիքլ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված «Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» հավելվածում (Հավելված 3) **10-րդ և 12-րդ չափաբաժինների մասով** առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված չէ ապրանքի նոր, չօգտագործված լինելու,հանձնելու պահին պիտանելիության ժամկետի առնվազն 70% -ի առկայության, ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի սերտիֆիկատի առկայության պարտադիր լինելու հանգամանքները:

բ) «Պրոֆտեստ »ՍՊ ընկերության կողմից ներկայացված «Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» հավելվածում (Հավելված 3) **17- րդ ,18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով** ապրանքային նշանները հստակեցված չեն:

գ) «ԷՄԴԻ ԸՆԴ ԴԻ ԸԼԼԱՅԵՆՍ» ՍՊ ընկերության կողմից «Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» հավելվածում (Հավելված 3) **14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով** հստակ չի երևում ցանկված մատակարարված խմբաքանակի համար որակի ինչ տեսակի սերտիֆիկատ է ներկայացվելու,ինչպես նաև ապրանքային նշանները հստակեցված չեն:

2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ դրույթներով՝քարտուղարին՝ նույն օրը համակարգի միջոցով ծանուցել վերոնշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել.

- «ԼաԷկա» ՀՁ ՍՊԸ-ին թիվ 1, 2, 3, 4, 5, 8 չափաբաժինների մասով:

- «Իմպլանտմեդ» ՍՊԸ-ին թիվ 6 չափաբաժնի մասով:
- «Թեոֆարմա» ՍՊԸ-ին թիվ 7 չափաբաժնի մասով:
- «Պրոֆտեստ» ՍՊԸ-ին թիվ 9, 11, 13, 16, 20 չափաբաժինների մասով:
- «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ին թիվ 21 չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին

Թիվ 7 չափաբաժնի մասով անգործության ժամկետը լրանալուց հետո, իսկ թիվ 1, 2, 3, 4, 5, 8, 6, 9, 11, 13, 16, 20, 21 չափաբաժինների մասով՝ գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ընտրված մասնակիցներին կառաջարկվի կնքվել գնման պայմանագրեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի անունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Լ.Դանիելյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Է.Միրոյան**
(ստորագրությունը)

_____ **Կ.Մկրտչյան**
(ստորագրությունը)

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Մ. Ղարիբյան**
(ստորագրությունը)